Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2025 թվականի օգոստոսի 26-ի

թիվ 1 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ Որակի ապահովման բաժնի 2024–2025 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան)

2. ԳՊՀ ներքին որակի ապահովման համակարգի կատարելագործման նոր նախաձեռնությունների քննարկման մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան)

3. Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքի և բակալավրիատի ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքի կազմակերպման և կատարման կարգերի նախագծի քննարկման մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան)

4. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին:

(Զեկուցողներ՝ ֆակուլտետների պատասխանատուներ, Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան)

1. **Լսեցին** - Ք Հայրապետյանը ներկայացրեց 2024–2025 ուսումնական տարվա գործողությունների պլանի կատարման մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ պլանով նախատեսված միջոցառումների գերակշիռ մասը կատարվել է սահմանված ժամկետներում, իսկ իրականացված աշխատանքները նպաստել են ԳՊՀ ներքին ՈԱ համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Քննարկեցին - Մասնակիցներն անդրադարձան կատարված աշխատանքներին, արձանագրեցին ձեռքբերումներն ու բարելավման ենթակա ուղղությունները՝ մասնավորապես հարցումների ձևաչափի փոփոխություն, հարցման նոր տիրույթի մշակում և այլն:

Որոշեցին

1. ԳՊՀ ՈԱԲ 2024–2025 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի քննարկմանը:

2. Լսեցին - Ներկայացվեց ներքին որակի ապահովման համակարգի կատարելագործմանն ուղղված նոր նախաձեռնությունները՝ մասնավորապես ԳՊՀ գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացվել ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության հիմունքները, առաջավոր փորձի ուսումնասիրման արդյունքում բարելավվում է ԳՊՀ ՈԱ ձեռնարկը:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները քննարկեցին առաջարկվող առաջնահերթությունները և ներկայացրին լրացուցիչ առաջարկություններ՝ ուղղված որակի մշակույթի զարգացմանը և շարունակական բարելավմանը:

Որոշեցին

1. Հավանություն տալ ներկայացված ՈԱ առաջնահերթություններին:
2. «ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության հիմունքներ»-ի նախագիծը ներկայացնել ԳՊՀ գիտխորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

3. Լսեցին - Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքի կատարման և բակալավրիատի ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքի կազմակերպման և կատարման կարգերի նախագծերը՝ անդրադառնալով դրանց նպատակներին, կառուցվածքին և կիրառման առանձնահատկություններին:

Քննարկեցին

Ֆակուլտետային ՈԱ պատասխանատուները, ուսանողները քննարկեցին կարգի առանձին դրույթները՝ առաջարկելով խմբագրական և բովանդակային մի շարք ճշգրտումներ՝ մասնավորապես ինքնուրույն աշխատանքի ձևերի հստակեցման, գնահատման ձևաչափերի վերաբերյալ:

Որոշեցին

1. Հավանություն տալ ներկայացված կարգի նախագծերին և ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

4. Լսեցին - Ֆակուլտետների պատասխանատուները և Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյանը ներկայացրին Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման հարթակի մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ հարթակի օգտագործման ակտիվությունը բարձրացել է, սակայն անհրաժեշտ է շարունակել դասընթացների բովանդակության արդիականացման և դասախոսների թվային կարողությունների զարգացման աշխատանքները:

Քննարկեցին - Մասնակիցներն անդրադարձան հարթակի արդյունավետ կիրառման փորձին և առաջարկեցին շարունակել օգտատերերի վերապատրաստումները՝ մասնավորապես արհեստական բանականության գործիքների կիրառման ուղղությամբ, ինչպես նաև պարբերաբար գնահատել համակարգի կիրառման արդյունավետությունը:

Որոշեցին

1. Ի գիտություն ընդունել Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքները:
2. Էլեկտրոնային ուսուցման գործիքների արդյունավետ կիրառման նպատակով դասախոսների համար թեմատիկ վերապատրաստումներ կազմակերպելու համար առաջարկներ ներկայացնել ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժին:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի
2025 թվականի սեպտեմբերի 24-ի
թիվ 2 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման նոր էլեկտրոնային հարթակի մշակման և դրա փորձնական արդյունքների ներկայացման մասին:

(Զեկուցող՝ ԳՊՀ դասախոս Կ. Մաստոյան)

2. Համալսարանի բոլոր ստորաբաժանումների կողմից 2024–2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների մշտադիտարկման և 2025–2026 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերի ու գործողությունների պլանների հավաքագրման գործընթացի մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան)

3. ԳՊՀ առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծության մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան)

4. ԳՊՀ ուսումնական ռեսուրսներից հեռակա բաժնի ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան)

1. Լսեցին - ԳՊՀ դասախոս Կ. Մաստոյանը ներկայացրեց ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման նոր էլեկտրոնային հարթակի մշակման ընթացքը, դրա հնարավորությունները և փորձնական կիրառման արդյունքները: Նշվեց, որ նոր հարթակը հնարավորություն է տալիս ապահովել տվյալների ավտոմատ մշակում և արդյունքների արագ ամփոփում:

Քննարկեցին - Մասնակիցները բարձր գնահատեցին նոր հարթակի տեխնիկական հնարավորությունները՝ ընդգծելով, որ այն կնպաստի դասավանդման որակի գնահատման գործընթացի թափանցիկության և արդյունավետության

բարձրացմանը: Առաջարկվեց շարունակել փորձնական կիրառումը՝ հաշվի առնելով օգտատերերի առաջարկությունները:

Որոշեցին

1. Շարունակել հարթակի փորձնական շահագործումը և կատարել անհրաժեշտ տեխնիկական ու բովանդակային բարելավումներ:
2. Հարթակի վերջնական տարբերակը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. Լսեցին - Որակի ապահովման բաժնի վարիչ Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց համալսարանի ստորաբաժանումների կողմից 2024–2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների մշտադիտարկման պլանների և 2025–2026 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերի ու գործողությունների պլանների հավաքագրման ընթացքը: Ընդգծվեց, որ գործընթացը նպատակ ունի ապահովել ստորաբաժանումների գործունեության համակարգված գնահատումը և հաջորդ տարվա ռազմավարական պլանավորումը:

Քննարկեցին - Մասնակիցները քննարկեցին փաստաթղթերի մշակման միասնական պահանջները՝ կարևորելով ստորաբաժանումների ակտիվ մասնակցությունը և սահմանված ժամկետների պահպանումը:

Որոշեցին

1. Շարունակել մշտադիտարկման գործընթացը, արդյունքներն ամփոփել համապատասխան հաշվետվությամբ:

3. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման մասին հարցման արդյունքների վերլուծությունը: Ներկայացվեցին ուսանողների ակնկալիքները կրթական միջավայրի, ուսումնական գործընթացի կազմակերպման, տեղեկատվական աջակցության և ուսանողական ծառայությունների վերաբերյալ:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին առաջին կուրսի ուսանողների կարծիքների ուսումնասիրությունը՝ որպես նրանց արդյունավետ ինտեգրմանն ու ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանն ուղղված կարևոր գործիք:

Առաջարկվեց հարցման արդյունքները հաշվի առնել ուսանողների աջակցման ծրագրերի մշակման ընթացքում:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները տրամադրել համապատասխան ստորաբաժանումներին՝ անհրաժեշտ բարելավման միջոցառումներ իրականացնելու նպատակով:

4. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց հեռակա բաժնի ուսանողների շրջանում անցկացված հարցման արդյունքները՝ ուսումնական ռեսուրսներից բավարարվածության գնահատման վերաբերյալ: Նշվեց, որ ուսանողները հիմնականում դրական են գնահատել ուսումնական ռեսուրսների հասանելիությունն ու որակը՝ միաժամանակ ներկայացնելով առաջարկություններ գրադարանային ֆոնդի համալրման, դասասենյակների վերանորոգման և կահավորման վերաբերյալ:

Քննարկեցին

Նիստի մասնակիցները քննարկեցին ստացված արդյունքները և կարևորեցին հեռակա ուսուցման առանձնահատկություններին համապատասխան ուսումնական ռեսուրսների շարունակական կատարելագործումը:

Որոշեցին

1. Հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի
2025 թվականի դեկտեմբերի 28-ի
թիվ 3 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2025 թվականի մշտադիտարկման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան)

2. Ուսանողների խնդիրների, կարիքների և առաջարկությունների մասին:

(Զեկուցող՝ Ուսանողական խորհրդի նախագահ Լ. Մանուկյան)

3. ԳՊՀ-գործատու համագործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և հետագա անելիքների մասին:

(Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյան)

4. ԳՊՀ ինստիտուցիոնալ վերահավատարմագրման ինքնավերլուծության գործընթացի մեկնարկի, աշխատանքային խմբերի ձևավորման և հետագա աշխատանքների կազմակերպման մասին:

(Զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր)

1. Լսեցին - Որակի ապահովման բաժնի մասնագետ Մ. Նախրատյանը ներկայացրեց ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 2025 թվականի մշտադիտարկման արդյունքները: Ներկայացվեցին հոդվածների ձևավորման, խմբագրման, գրախոսման գործընթացների վերաբերյալ իրականացված վերլուծության արդյունքները: Ընդգծվեց, որ անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել ժողովածուների բովանդակային և տեխնիկական չափանիշները՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից գիտական հրատարակչական պահանջներին:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները քննարկեցին մշտադիտարկման արդյունքները՝ կարևորելով հոդվածների ընտրության թափանցիկ ընթացակարգերի, գրախոսման որակի բարձրացման և ժողովածուների տեսանելիության ընդլայնման անհրաժեշտությունը:

Որոշեցին

1. Ի գիտություն ընդունել մշտադիտարկման արդյունքները: Շարունակել գիտական հրատարակությունների որակի պարբերական գնահատման աշխատանքները:

2. Լսեցին - Ուսանողական խորհրդի նախագահ Լաուրա Մանուկյանը ներկայացրեց ուսանողների կողմից բարձրացված հիմնական խնդիրները, կրթական և սոցիալական կարիքները, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ առաջարկությունները: Առանձնակի ուշադրություն դարձվեց ուսումնական ռեսուրսների հասանելիությանը, տեղեկատվական ապահովմանը և ուսանողական ծառայությունների բարելավմանը:

Քննարկեցին - Մասնակիցներն ընդգծեցին ուսանողների հետ շարունակական երկխոսության կարևորությունը և քննարկեցին ներկայացված առաջարկությունների իրականացման հնարավորությունները:

Որոշեցին

1. Ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը:
2. Առաջարկությունները փոխանցել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին՝ քննարկման և հնարավոր լուծումների մշակման նպատակով:

3. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց գործատուների հետ համագործակցության շրջանակում իրականացված աշխատանքները, մասնավորապես՝ համատեղ հանդիպումները, մասնագիտական քննարկումները, պրակտիկաների կազմակերպման և շրջանավարտների զբաղվածությանն ուղղված միջոցառումները:

Քննարկեցին - Մասնակիցներն ընդգծեցին գործատուների ակտիվ ներգրավվածության կարևորությունը մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման, ուսանողների գործնական պատրաստվածության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթության ապահովման գործում: Առաջարկվեց բուհ-գործատու համագործակցության շրջանակում կազմակերպել ուսանողական

գիտաժողովմներ, մասնագիտական քննարկումներ, ինչը կնպաստի ուսանողների հաղորդակցմանը գործատուների հետ, նրանց մասնագիտական, գործնական հմտությունների բարելավմանը:

Որոշեցին

1. Ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը:
2. ԳՊՀ գործատուներին ներգրավել ՄԿԾ-ների գնահատմանը նվիրված ԳՊՀ ֆակուլտետային և ամբիոնային քննարկումներին:

4. Լսեցին - Զեկուցողը նշեց, որ մեկնարկել են վերահավատարմագրման նախապատրաստական աշխատանքները, որոնց արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է ձևավորել ինքնավերլուծության համապատասխան աշխատանքային խմբեր՝ ըստ չափանիշների և պատասխանատվության ոլորտների: Ընդգծվեց, որ աշխատանքային խմբերը պետք է համակարգված իրականացնեն անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը, ապացույցների նախապատրաստումը և ինքնավերլուծության զեկույցի մշակումը՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Քննարկեցին - Նիստի անդամները կարևորեցին ինստիտուցիոնալ վերահավատարմագրման գործընթացի պատշաճ կազմակերպումը և ընդգծեցին բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը: Առաջարկվեց աշխատանքային խմբերում ընդգրկել համապատասխան փորձ և մասնագիտական կարողություններ ունեցող աշխատակիցների, սահմանել յուրաքանչյուր խմբի պատասխանատուներին, հստակեցնել նրանց գործառույթներն ու աշխատանքների իրականացման ժամանակացույցը: Նշվեց նաև, որ անհրաժեշտ է ապահովել աշխատանքային խմբերի միջև արդյունավետ համագործակցություն և գործընթացի մշտադիտարկում:

Որոշեցին

1. Ձևավորել ինքնավերլուծության աշխատանքային խմբեր՝ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանը:
2. Հանձնարարել աշխատանքային խմբերին՝ մշակել և իրականացնել աշխատանքների կազմակերպման պլանը, հավաքագրել անհրաժեշտ

տեղեկատվությունը և նախապատրաստել ինքնավերլուծության համապատասխան բաժինների նախագծերը՝ սահմանված ժամկետներում:

3. Գործընթացի ընդհանուր համակարգումը վերապահել Որակի ապահովման բաժնին:
4. Աշխատանքային խմբերի գործունեության ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել գիտական խորհրդին (կամ ռեկտորատին):

5. Ընթացիկ հարցեր:

Լսեցին - Քննարկվեցին կազմակերպչական բնույթի ընթացիկ հարցեր, որոնք վերաբերում էին Որակի ապահովման բաժնի առաջիկա աշխատանքների կազմակերպմանը և ստորաբաժանումների հետ համագործակցության ընթացիկ խնդիրներին:

Որոշեցին

1. Ընթացիկ հարցերով ներկայացված առաջարկություններն ընդունել ի գիտություն:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2026 թվականի ապրիլի 15-ի

թիվ 4 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ-ի և Գեղարքունիքի մարզի դպրոցների տնօրենների ու ուսուցիչների հետ համագործակցության, մասնագիտական կողմնորոշման և ընդունելության գործընթացների վերաբերյալ հանդիպման արդյունքների մասին:

   (Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան)

2. ԳՊՀ ուսանողների գիտահետազոտական գործունեության ակտիվացման ուղղությունների քննարկման մասին:

   (Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մ. Նախրատյան)

3. «Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգի» և «Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման ծեռնարկ»-ի բարելավված նախագծերի քննարկման մասին (Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան)

1. Լսեցին - ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ-ի և Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների և ուսուցիչների հետ անցկացված հանդիպման արդյունքները: Նշվեց, որ հանդիպման ընթացքում ուսուցիչները կարևորել են համալսարանի հետ շարունակական համագործակցությունը, առաջարկել պարբերաբար կազմակերպել մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, բաց դասախոսություններ և աշակերտների այցելություններ համալսարան:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները նշեցին, որ շահակիցների անմիջական մասնակցությունը հնարավորություն է տալիս բացահայտել ուսուցիչների և դիրմորդների իրական կարիքները և համապատասխանեցնել համալսարանի մասնագիտական կողմնորոշման աշխատանքները շահակիցների պահանջներին:

Որոշեցին

1. Շարունակել և ընդլայնել ԳՊՀ–դպրոց համագործակցության ձևաչափերը:
2. Հանդիպումների արդյունքները ներառել ՈԱԲ տարեկան մշտադիտարկման հաշվետվություններում:

2. Լսեցին - Մ. Նախրատյանը ներկայացրեց ուսանողական գիտական ընկերության նախագահների և անդամների հետ հանդիպման արդյունքները: Նշվեց, որ քննարկվել են ուսանողների գիտահետազոտական ակտիվության բարձրացման, գիտաժողովներին և մրցույթներին մասնակցության ընդլայնման, գիտական հոդվածների հրապարակման խթանման հնարավորությունները:

Ուսանողները հանդես եկան առաջարկություններով՝ կազմակերպել հետազոտական մեթոդաբանության վերապատրաստումներ, գիտական գրավոր աշխատանքի հմտությունների զարգացման սեմինարներ և գիտական ղեկավարների հետ պարբերական խորհրդատվություններ:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին ուսանողների ակտիվ ներգրավվածությունը գիտահետազոտական գործընթացներում՝ որպես կրթության որակի բարձրացման կարևոր բաղադրիչ: Նշվեց, որ ուսանողների առաջարկությունները նպատակահարմար է ներառել ՈԱԲ բարելավման գործողությունների ծրագրում:

Որոշեցին

1. Ուսանողների համար գիտահետազոտական կարողությունների զարգացման սեմինարների իրականացման առաջարկությամբ դիմել ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորին:

3. Լսեցին - ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց «Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգի» և «Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ»-ի բարելավված նախագծերը:

Ներկայացվեց ՈԱ բաժնի գործունեության կանոնակարգի հիմնական փոփոխությունները, որոնք վերաբերում են բաժնի գործառույթների հստակեցմանը, որակի ապահովման գործընթացների կատարելագործմանը, շահակիցների

մասնակցության ընդլայնմանը և ներքին որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

Ներկայացվեց ձեռնարկում առաջարկվող հիմնական փոփոխությունները, որոնք վերաբերում են կրթական ծրագրերի պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և բարելավման գործընթացներին, շահակիցների ներգրավվածության ընդլայնմանը, հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործմանը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների պատասխանատվությունների և գործառույթների հստակեցմանը:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները քննարկեցին ներկայացված նախագծերը, կարևորեցին դրանց արդիականացումը և առաջարկեցին հաշվի առնել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները՝ փաստաթղթերի վերջնական տարբերակները պատրաստելիս:

Նիստի մասնակիցները քննարկեցին ներկայացված փոփոխությունների նպատակահարմարությունը և կարևորեցին ձեռնարկի համապատասխանեցումը գործող նորմատիվ պահանջներին ու ԳՊՀ ռազմավարական առաջնահերթություններին: Առաջարկվեց վերջնական խմբագրության ընթացքում առավել հստակ սահմանել ՈԱ համակարգում ներգրավված մարմինների գործառույթները:

Որոշեցին

1. Հավանություն տալ «Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգ»-ի և «Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ»-ի փոփոխված նախագծերին և ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2026 թվականի հունիսի 17-ի

թիվ 5 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Գործատուների կողմից ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական գիտելիքների, կարողությունների գնահատման, ինչպես նաև պրակտիկա անցած ուսանողների մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ հարցումների արդյունքների վերլուծությունների մասին:

(Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան)

2. ԳՊՀ ինստիտուցիոնալ վերահավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքների ընթացքի և ներկայացված հաշվետվությունների մասին:

(Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան)

1. Լսեցին - ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց գործատուների շրջանում իրականացված հարցումների արդյունքների ամփոփ վերլուծությունը: Նշվեց, որ գործատուները հիմնականում դրական են գնահատել ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը, մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները: Միաժամանակ առանձնացվել են մի շարք բարելավման ուղղություններ, մասնավորապես՝ գործնական հմտությունների խորացում, օտար լեզուների կիրառման կարողությունների զարգացում, թվային գործիքների արդյունավետ օգտագործում և թիմային աշխատանքի հմտությունների ամրապնդում:

Ներկայացվեցին նաև պրակտիկա անցած ուսանողների վերաբերյալ գործատուների գնահատումների արդյունքները, որոնց համաձայն ուսանողները դրսևորել են բավարար մասնագիտական պատրաստվածություն, պատասխանատվություն և համագործակցային կարողություններ, սակայն անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել նրանց գործնական

փորձառությունը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողությունները:

Որոշեցին

1. Հարցումների արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. Լսեցին - ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց ԳՊՀ ինստիտուցիոնալ վերահավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ աշխատանքային խմբերը ներկայացրել են կատարված աշխատանքների միջանկյալ հաշվետվությունները, հավաքագրվել և համակարգվել են անհրաժեշտ փաստաթղթերն ու ապացուցողական նյութերը, իրականացվել են խմբային քննարկումներ և կատարվել են ինքնավերլուծության բաժինների լրամշակման աշխատանքներ:

Քննարկման ընթացքում ընդգծվեց աշխատանքների սահմանված ժամկետներում ավարտման, չափանիշների ամբողջական արտացոլման և ստորաբաժանումների միջև արդյունավետ համագործակցության կարևորությունը:

Որոշեցին

1. Հանձնարարել աշխատանքային խմբերին շարունակել ինքնավերլուծության հաշվետվության լրամշակումը՝ ապահովելով չափանիշների և չափորոշիչների ամբողջական ներկայացումը:
2. Շարունակել անհրաժեշտ փաստաթղթերի և ապացուցողական նյութերի հավաքագրումն ու համակարգումը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱԲ, ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումներ, ՈՒԽ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**